| **Bearbeitende Stelle:** |
|---|
| |

# ԿԱՐԵՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**(Ցուցմունք ըստ § 22, պարբ. 3-ի Քաղ. ապաստ. խնդրելու գործընթացի մասին օրենքի)**

| | |
|---|---|
| Ազգանուն: | |
| Անուն: | |
| Ծննդյան թիվ: | |
| Քաղաքացիություն: | |

**Aktenzeichen:**
(Bitte unbedingt angeben)

Հարգելի դիմորդուհի, հարգելի դիմորդ,

Դուք Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում քաղաքական ապաստարան ստանալու երաշխիք եք փնտրել:

Քաղաքական ապաստարան խնդրելու Ձեր ցանկության և քաղաքական ապստարան ստանալու Ձեր իրավունքի ճանաչման ստուգումը միայն այն դեպքում է դառնում հնարավոր, եթե Դուք ներկայացնեք քաղաքական ապստարան խնդրելու պաշտոնական դիմում: Դուք պարտավորվում եք ինքներդ անձամբ դիմում տալու միգրացիայի և փախստականների գծով դաշնային պետական ծառայության (Բունդեսամտի) ստորև բերված բաժնում: Միայն այդ բանից հետո կիրագործվի քաղաքական ապաստարան խնդրելու Ձեր գործընթացը:

Հարցազրույցի շրջանակներում Դուք առիթ կունենաք հիմնավորել քաղաքական ապաստարան խնդրելու Ձեր դիմումը: Վերջինս այնտեղ ներկայացնելուց հետո քաղաքական ապաստարան

ստանալու գործընթացի իրագործման նպատակով Դուք կստանաք ժամանակավոր բնակության թույլատվություն, որը կթույլատրի Ձեզ բնակվելու ընդունման հավաքատեղի շրջանում:

Նախ և առաջ Ձեզ կառաքեն սկզբնական ընդունման հավաքակետ, որը քաղաքական ապաստարան խնդրող դիմորդների համար վերջիններիս գործընթացի վարման ընթացքում առավելագույնս երեք ամսով ծառայում է որպես օթևան: Ընդունման հավաքատեղում Դուք կիմանաք միգրացիայի և փախստականների գծով դաշնային պետական ծառայության (Բունդեսամտի) համապատասխան բաժնի տեղը, ուր պարտավոր եք ներկայացնել քաղաքական ապաստարան ստանալու Ձեր դիմումը:

Այդ պատճառով անմիջապես ներկայացեք ամենաուշը մինչև ......................... հետևյալ հավաքատեղում. ..............................................................................................................................
..............................................................................................................................................

**Եթե Դուք վերոհիշյալ պահանջները դիտավորյալ կերպով կամ անփութության պատճառով չկատարեք, ապա Ձեզ համար չի հարուցվի քաղաքական ապաստարան խնդրելու գործընթաց: Իսկ եթե ավելի ուշ քաղաքական ապաստարան խնդրելու դիմում ներկայացնեք, ապա այն հաշվի կառնվի որպես երկրորդ դիմում, այսինքն՝ հետևանքի դիմում: Այդ դեպքում Ձեզ հետ կվերաբերվեն այնպես, որ կարծես Դուք մեկ անգամ արդեն ապաստարան խնդրելու համար դիմում եք ներկայացրել, որը ծախողվել է: Դրանից ելնելով՝ քաղաքական գործընթաց կվարվի միայն այն դեպքում, եթե իրերի և իրավական վիճակը փոխվել է ի նպաստ Ձեզ սկսած այն պահից, երբ Դուք քաղաքական ապաստարան խնդրելու դիմումը կկարողանայիք պարտավորության համաձայն ներկայացնել, կամ էլ առակա են Ձեր գործի վերաբերյալ նոր ապացույց միջոցներ:**

**Այս ցուցմունքն այսօր ես ստացա:**

**Այս ցուցմունքն այսօր ինձ համար թարգմանվել է հայերեն լեզվով, որի բովանդակությունը ես հասկացել եմ:**

.................................................. ...............................................................................................................

վայր ամսաթիվ Դիմորդուհու/դիմորդի կամ նրա ներկայացուցչի ստորագրությունը